

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 11

15 Սեպտեմբեր 1894



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

Պապը՝ Այի Ճառտեհի թիւ 20

1894

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. Դոմինիկեան մեծահոգակ քարոզիչ Բեր Տիտոնի վերջին բանաստեղծական մի մասն.— Օրիորդ Մ. Ա.
2. ԱՆԾԱՆՈԹԻՆ ԽՆԴԻՐՆ — Ս. Վ. Նալբեթեան:
3. Բնակելի աշխարհաց բազմութիւնն.— Ս. Վ. Ն.
4. ՄԱՆՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ — Ս. Վ. Ն.
5. ՎԱՐՔ Ս. ՄՈՆԻԲԱՅԻ. — ՅՈՎՀ. Վ. Աբէկեան:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Ե Ս Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ս Յ

Հինգերորդ Տարի

թիւ 11

15 Սեպտեմբեր 1894

Դոմինիկեան մեծահռչակ քարոզիչ Բեր Տիտոնի
վերջին բանախօսութեան մի մասն:



Քրիստոսական կրօնքը, Նզրարք իմ, է իսկապէս ընթրիք մը, ընթրիք մը պատրաստուած Աստուծոյ մարդկան. հրաշալի, անըմբռնելի, անլուր ընթրիք մը, յորում Աստուած ինքնին է պատրաստողն եւ կերակուրը՝ միանգամայն եւ ըմպելին. Ամբողջ մարդկութիւնը հրաւիրուած է անդ, առանց խտրութեան ցեղի, կրթութեան եւ մշակութեան աստիճանի, հասակի, վիճակի եւ սեռի. Ամենքն կրնան գալ, եթէ ուզեն. բայց ամենքն պէտք է գան վասն զի կարելի չէ Աստուծոյ հրաւերը մերժել առանց իւր բարութիւնը վշտացունելու:

Ուստի, Նզրարք իմ, ընթրիք մը կ'ենթադրէ սրահ մը հրաւիրեալներն ընդունելու համար, պատեր եւ տանիք զիրենք պատսպարելու համար. Այս սրահը ո՞վ պիտի պատրաստէ. այս պատերը ո՞վ պիտի բարձրացունէ. այս օրհնակ տանիքը ո՞վ պիտի կանդնէ. Զարմանալի բան, Աստուած անոր հոգը նոյն իսկ մարդոյն՝ հրաւիրելոյն՝ վերապահած է:

Կը յիշէ՞ք այն անմահ զատիկը զոր Յիսուս կատարեց իւր մահունէ յառաջ իւր աշակերտներովն հանդերձ. Այն զատիկը՝ յորում արարողութիւնքն աւարտած ըլլալով՝ ինքնզինքը տուաւ մարմին եւ արիւն՝ հացի եւ գինուոյ տեսակաց ներքեւ:

Ինքն հաստատեց այս պատարագը եւ այս ընթրիքը որ պիտի մշտնջենաւորէր յընթացս դարուց եւ յազեցընէր զմարդըն, հաղորդելով իրեն յաւիտենական կենաց կերակուրն եւ ըմպելին: Ուստի Եղբարք իմ, աշակերտներն եղան՝ որ իրենց Տիրոջմէն պատուէր ընդունեցան սրահը գանելու եւ պատրաստելու: «Գացէք, ըսաւ իրենց, եւ պիտի գտնաք ընթրիքի սրահ մը, մեծ եւ զարդարուած, հոն պատրաստեցէք զատիկը:»

Առաջին աշակերտներուն օրինակին հետեւելով ետեւէն եկողները՝ նոյն ձայնը լսեցին, եւ անոնք ալ պատրաստեցին Վերնատունը: Եկեղեցիներ կանգնեցին, այն ընդարձակ ընթրիքի սրահները՝ ուր որ Գառն Աստուծոյ մեղի համար զոհուած կը բաշխուի Որդւոյ մարդոյն հրաւիրեալներուն, ուր Գառնին արիւնը ամենուն կը արուի իբրեւ զմայլեցուցիչ ըմպելի մը:

Առաջին Վերնատունը անհետացած է գարեւէ 'ի վեր, նոյն տեղւոյն վրայ բարձրացած եկեղեցին՝ այժմ դատարկ է: Քրիստոսի ուխտաւորները արամութեամբ կ'անցնին այն ամայի կամարներուն տակէն, համբուրելով այն սրբազան պատերը: Սակայն քրիստոսական հաւատքը փոխարկած է ամէն եկեղեցիները նոյնչափ Վերնատուններու եւ այսպէսով ամբողջ աշխարհը լիցեցեցաւ ընթրիքի սրահներով:

Որդւոյ մարդոյն ձայնը աշխարհիս չորս կողմը կը հնչէ: «Եկէք, կ'ըսէ, կ'երէք հացը եւ խմեցէք զինին որ ձեզի համար լեցուցի»: Աստուծոյ տունը այսպէսով կենաց տունն եղաւ: Ամենայն ինչ կարգադրուած է անդ ներշնչելու համար 'ի մարդկային հոգին այն կիանքն՝ որ զմեզ Աստուծոյ որդւոց դերագոյն պատուոյն կը բարձրացունէ: Իրմէն կը բզխէ յորդառատ աղբիւրի պէս սրբեալ ջուրը, որ մեր յանցանաց վրայ հեղեալ կը սրբէ զմեզ սկզբնական թիծէն, եւ Գառնին նշանաւ կը դրոշմէ զմեզ: Իրմով է որ 'ի վերուստ զօրութիւնն կը սպառազինէ զմեզ կենաց պայքարներուն դէմ կռուելու համար, իրմէն կառնու քահանայն վերջին թոշակը՝ որ պիտի զօրացնէ զմեզ 'ի յաւիտենականութեան ուղով. առ ինքն կուգայ մեղաւորը իր հոգւոյն վերքերը լուանալու համար եւ բժշկելու զանոնք Խաչեցեցեցոյն արեան մէջ: Իւր խորանաց առջեւն է որ մարդոյն եւ կնոջ սէրը օրինաւորապէս կը հաստատուի նոր տուննւր կազմելու համար: Հոն է վերջապէս, ուր որ քահանայն կ'ընդունի գերագոյն օծումը՝ որ յաւիտենականութեան մէջ Յիսուսի Քրիստոսի քահանայութեան հաղորդ կ'ընէ զինքն:

Ասկէց, Եղբարք իմ, բայցարձակ սրբութեան զրոշմը՝ որ մեր եկեղեցիներուն հետ կապեալ է. որ կը բարձրացունէ զանոնք մարդու ձեռք կանգնուած ամէն շէնքերէն վեր:

Երկու տեղ կայ որ մարդուս պատկառանք կ'ազդէ. տուները եւ գերեզմանները, Տուները՝ որովհետեւ իրենց մէջ կը ծնանի կեանքը. Գերեզմանները որովհետեւ իրենց մէջ կը յանդի. բայց մին եւ միւսն ինչ են մեր տաճարաց քով, ուր կը ծնանինք յԱստուած եւ որոնց մէջ կը սորվինք յինքն մեռանել: Մեր տաճարներուն զրաւած հողը՝ սուրբ է Պաղեստինու հողոյն պէս, ուր Յիսուս ապրեցաւ. պատուական՝ Գողգոթայի պէս, ուր որ մեռաւ, եւ Վերնատան պէս՝ ուր որ կաաբեց իւր վերջին զատիկը, որ անդադար կը նորոգուի իրեն պատերուն մէջ:

Կը հետեւցունեմ, Եղբարք իմ, որ եթէ իւր Աստուածն պատու պարկու համար մարդս կրցաւ հնարել սքանչելի արուեստական մեծագործութիւն մը, ընթրիքին սրահը պատրաստելու համար, ուր որ իւր աստուածային հիւրը իբրեւ Աստուծոյ որդի պիտի նկատէր զինքն՝ հնարեց ամենէն կենդանի եւ ամենէն սրբազան բնակութիւն մը:

Գեղեցկահայեցութիւնը բնաւ բան մը չկորսնցունէր. վասն զի կեանքը եւ սրբութիւնը երկու տարերք են որ կամբողջացընեն զայն: Ամենագեղեցիկ արձանը բան մը չէ՝ թէ որ կենդանութիւն չունենայ, թէ որ բարոյական գեղեցկութիւնը չճառագայթէ իւր ճակտին վրայ եւ սրտի մը չբողբէ: Տեսայ եղիպտոսի հսկայածեւ տաճարները եւ Պարթևոսի հիանալի մընացորդները. առաջիններուն հսկայագործ մեծութիւնը եւ երկրորդներուն դադափարական չափակցութիւնը զիրենք դարերուն ծանրութենէն չէ պաշտպանած: Տիսանական շիրիմներու աղեցութիւնը կընեն վրանիս, ստկայն ունայն եւ առանց կենդանութեան: Աւելի կը սիրեմ մեր աղքատագոյն եկեղեցին զի գոնէ կեանք մ'ունի, կապրի, եւ գերազանց կենդանին զԱստուած կը պատուարէ իւր յարկին տակ. հոն սրբութիւնը յարգելի եւ քաղցր է:

Աւելի խորունկ գննելով քրիստոսական Հաւատոյ հողին՝ պիտի գտնենք, Եղբարք իմ, վերջին հանդամանք մը՝ որ կը բացատրէ մեր եկեղեցիներուն սկզբնապատճառը, եւ որ կուտայ այս շէնքերուն նոր եւ փառաւոր կերպարանք մը: Հարցուցած էք երբէք ձեզի թէ ինչ գերագոյն նպատակ կրնար ունենալ Նախախնամութիւնը Մարդեղութեան խորհրդով, եւ ինչ կուտ

գէր արդեօք հաղորդելովն մարդկան աստուածային կեանքն, որուն աղբիւրն էր ինքնին Բանն մարմնացեալ: Ամբողջ քրիստոնէութիւնը, լովանդակ քրիստոնէութեան էութիւնն՝ այս նպատակիս՝ եւ այս վերջին կամքին մէջն է:

Արդ այս երկնային նպատակը գիտենք, ասոր դադանիքը ընդունած ենք բուն իսկ Քրիստոսին բերնէն: Խրկուած էր իր Աստուծոյ Հօրմէն՝ աշխարհիս չորս կողմէն հողիները ժողովելու, իրեն չուրջը հաւաքելու համար. ինչպէս կորսուած ոչխարները կը ժողվուին հովուին չորս դին, այնպէս որ մի ըլլան. եւ այնուհետեւ մի հօտ եւ մի հովիւ լինին: Մարդկութեան եւ Փրկչութեան խորհրդոյ ծրագիրը այս հրաշալի վախճանին կը յանդիմարդկան տոհմասարակ եղբայրութիւնը եւ իրենց եղբայրական միութիւնը նոյն երկնաւոր Հօր թեւին տակ, եւ նոյն զխոյ Քրիստոսի պատկառանք: Ահաւասիկ կրօնից ուղեւծուծը: Միթէ եւ այս չէ՞ Եկեղեցի բառին նշանակութիւնը, որ իր բառական զօրութեամբ՝ ժողովք ըսել է, համախմբութիւն. այնպէս որ Եկեղեցւոյն անդամներն իրօք իսկ ժողովաւորներ՝ համախմբեալներ՝ կոչեցեալներ են: Չեմ անգիտստար նաեւ՝ թէ Քրիստոնէից միութիւնը նախեւառաջ հողւոյ հողւոր միութիւն մ'է, թէ զիրենք միացնող կապը աննիւթական եւ աստուածային կապ մ'է, զոր վնասելու է տեսանելի եւ շօշափելի իրերէ վեր, յԱստուած ինքնին, իւր անհուն Հողւոյն մէջ. որ զմեզ Քրիստոսի հետ կապելով՝ մի եւ նոյն բարոյական կազմութեան միութեան մէջ կը հաստատէ իրեն հետ:

Կը խոստովանիմ եւս որ այս միութիւնը զեռ եւս կազմակերպուելու վրայ է այս աշխարհիս վրայ, եւ թէ միայն իւր լըրութիւնը պիտի ստանայ այս կեանքէն դուրս, յերկինս. ուր Աստուած ամբողջապէս 'ի մեզ լինելով՝ պիտի հրճուինք նոյն ճշմարտութիւնը՝ նոյն սէրը, նոյն բարիքը, նոյն գեղեցկութիւնը եւ նոյն կատարելութիւնը վայելելով:

Բայց որովհետեւ այս աշխարհիս մէջ Աստուծոյ Հողին մեզի հաղորդուած է զգալի եւ նիւթական նշաններով, որովհետեւ Աստուած ինքնին Որդւոյ Մարդոյ տեսանելի կերպարանքով յայտնուած է, որովհետեւ աշխարհս թողլէն վերջ հաճեցաւ իւր աներեւոյթ իշխանութեանն տեսանելի ներկայացուցիչ մը հաստատել, որովհետեւ այս կեանքէն իսկ տուաւ մեզի մեր ակնկալութեանց սպասած երկնաւոր ապագային նախաճաշալը, ինչպէս ուրեմն մարդկան միութիւնն՝ 'ի Քրիստոս համահաւաքեալ՝

միայն ներքին երեւոյթ մը լինէր: Ի՞նչպէս՝ այդ նախատահման-
կալքն՝ որ նոյն հաւատքով, նոյն սիրով, նոյն աստուածային
ձգտմամբ եւ ըղձիւք կ'ապրին, չմիանան՝ աղօթելու, զիրար
սիրելու, պաշտելու, յուսալու, եւ միեւնոյն եղանակաւ ներքին
երգերն որ իրենց հոգիքն կը ղեղուն՝ երգելու:

Այս օրէնքին է որ հնազանդած է Քրիստոնեայն, երբ եկե-
ղեցիները կանոնած է, որ եղած են իրեն համար այն սրբազան
տեղը՝ յորում՝ թէեւ ըստ մասին, այո՛, այլ նիւթապէս, քրիստո-
սական մեծ ընտանեացը միութիւնը կիրադործուի: Նման այն
զաղթական թռչնոց, որք ժամանակն հաւնելուն՝ աստ անդ կը
ժողովուն, խումբ խումբ կը հաւաքուին, 'ի միասին թռչելու
համար դէպ 'ի յայն աշխարհներն՝ զոր իրենց ընաղդունն կ'երազէ
սիրողութար: Այսպէս ալ Աստուծոյ որդիքը, իրեւ թռչունք եր-
կնից կը միաբանին իրենց տաճարներուն մէջ, եւ հոն կը պատ-
րաստուին իրենք ալ իրենց թռիչն առնելու առ Քրիստոս, որ
կանխած է քան զիրենք երթալ 'ի ծոց Աստուծոյ, ուր մտաւոր
էակաց յաւիտեանական ընտանեաց լիովի եւ կատարեալ միու-
թիւնն պիտի իրադործուի:

Արդէն մարդ 'ի ընէ եւ իսկապէս ընկերական ըլլալով՝ չը-
խորշիր միթէ՝ միայնակ եւ առանձնացեալ ապրելէն: Եւ եթէ
այնպէս է՝ ի՞նչպէս կրնայ կրօնքն այս ամենակարեւոր պէտքէն
խուճափել: Մարդս միթէ՝ զպրօցներ չէ՞ կառուցած իւր տղաք-
ները 'ի միասին կրթելու համար: Պալատներ չէ՞ կանդնած հաս-
րակաց դասաստաններ կտրելու համար, զինուորանոցներ՝ զին-
ուորներ կարգելու եւ սլահելու համար, շէնքեր՝ երկրին եւ հայ-
րենեաց շահերու վրայ վիճաբանելու համար, կռուարաններ՝ վա-
ղելու, կռուելու, երբեմն եւ արիւնահեղ խաղեր հաստատելու
համար, եւ պիտի չկանգնէր առանձին տեղ մը հասարակաց ա-
ղօթելու համար երկնից եւ աշխարհի հանդէպ:

Իւր հաղորդական ընութեանն ստած կ'ըլլար:

Բայց ոչ, այս ընկերական ընութիւնը ընդ հակառակն ա-
մենայն ազատութեամբ ասպարէզ ունեցաւ, եւ այսօր տաճար-
ներն ամենուրեք կը վկայեն եւ կը հաստատեն զայն: Ինչպէս
ամեն կէտերուն՝ այնպէս եւ այս կէտիս մէջ կրօնքն կիշխէ
մարդուս ամենաբարձր զգացմունքներուն եւ ամենակարեւոր
պէտքերուն վրայ. գիտութեանց, հաճոյից, շահուց, կրից վրայ
յաղթող դանուեցաւ: Ուստի եւ եկեղեցիները որ 'ի սկզբան
կանգնուեցան Աստուծոյ ընակութիւնը՝ Գողգոթային շարու-

նակութիւնն՝ Քրիստոսի Վերնատունն՝ եւ միայնակեցին կոչնոց յարկն ըլլալու համար, մարդուս ամենէն հիւրասիրական ընակութիւնն եղան։ Ամենուն համար լաց է եկեղեցին. առանձնաշնորհութիւն մը՝ որ ամեն մարդկային բնակութիւններէն վերադոյն կը դասէ գնա։

Օտար մը՝ չէր կրնար առանց սրբապղծութեան եւ տաճարակապտութեան մանկ աստուածոց եւ նոցա երկրպագուաց՝ վերապահեալ շրջափակին մէջ։ Սրբապղծութիւնը մահուամբ կը պատժուէր։ Հեթանոսաց աստուածները անողորմ էին։

Ենովա ինքնին ունէր իւր սրբութիւն սրբոցն, յորում քահանայապետն միայն, եւ այն ալ տարին մէկ անգամ մը կրնար մտնել ժողովուրդը հետուէն եթէ կրնար դիտել այն ահաւոր Մեծվայելչութիւնը, որոյ առջեւ ահաւորով երկրպագութիւն կը մատուցանէր։

Մարդկան տուները միայն ըստեկամներուն համար լաց են, պալատները՝ արքունականներուն, եւ ասոնք պահապաններ ունին որ անոնց սեամն կը պահպանեն, եւ երբ մարդ հոն մտնէ հարկ է որ պարտուպատչած եւ իւր կարգին եւ աստիճանին համեմատ վարուի։ Քրիստոնէից Աստուծոյն բնակութիւնը՝ Հօր մը բնակութիւնն է։ Այն վարկեանէն որ տղաք անոր զուարէ կը զարնեն՝ խեղցն ամենայն զրուարէ կը բացուին իրենց առջեւ, ամեն օր եւ ամեն ժամու, առանց խորութեան բարբարոսի կամ օտարի, տիրոջ կամ ծառայի, աղքատի կամ հարուստի, իմաստնոյ կամ տղիտի, այլակրօնի կամ համակրօնի։

Յիրաւի ստոյգ ժողովրդական տուն մ'է։ Վայրկեան մը ամենայն կարգը եւ աստիճանը անդ չփոթած եւ զաղրած են. մարդիկ իրարու եղբարք են, եւ մի եւ նոյն երկնաւոր Հօր որդիք։ Կրնան հանգչիլ անդ, տան մը անոյշ համահաւասարութեամբ եւ միեւնոյն սեղանի բազմականութեամբ։ Մարդիկ հաւասարութեան վրայ կը խօսին, այս յաճախ պատրանք մ'է ամէն տեղ, բայց Աստուծոյ տունէն։ Մեծ աղմուկ կը յարուցանեն համախարհական եղբայրակցութեան վրայ, այլ ո՞ր կը դանուի այս համախարհիկ եղբայրակցութիւնը՝ եթէ ոչ անդ։

Միւս բնակութիւնները կրնան պակսիլ մեղի համար. որքեր կան առանց տունի, խեղճ եւ անպատասխան սուանց յորկի՝ հանգչելու եւ քնանալու համար։ Ո՛րք՝ Աստուծոյ տունը ընտանիք մը կըլլայ ձեզի համար։ Դժբաղդք՝ եկեղեցին ձեր բնակութիւնն է. եթէ քաղցեալ էք, կը դանէք հոն հացին կը-

տորը որ չթողուր զձեզ մեռնիլ. եթէ առանց զգետի էք՝ կը զգեցունէ զձեզ. եթէ ծարաւի էք, ջուր կը գտնէք անդ. եթէ հողինից վշտացած է՝ պիտի լսէք անդ մխիթարիչ ձայնը. եթէ սրտերնիդ վերջին աստիճանի սաղնապի մէջ է՝ թեթեւութիւն մը եւ զերտին արիութիւն պիտի արուի ձեզի անդ. եթէ առանց յոյսեր կորսնցուցեր էք, պիտի տեսնէք անդ աստուածային ճառագայթի մը նշողիլը՝ որ կեանքը վերադարձունէ պիտի ՚ի ձեզ եւ զԱստուած Փրկիչ պիտի ցուցնէ ձեզ:

Կը ճանչնաք արդ՝ Եղբարք իմ, մեր եկեղեցիներուն ճշմարիտ ծագումն. նախեւառաջ՝ Հաւատոյ զործք. որովհետեւ հաւատքն է որ զիրենք կանգնած է: Մարդս առանձին իւր բովանդակ հանճարով եւ սրտով երբեք երազած պիտի չըլար զանոնք, եւ ինչ որ կրցած է ընել սոսկ բնութեան միջոցներովն՝ անկեղծօք եւ ամայի տաճարներ եղան, անտաի կոոյ ընակութիւններ, Չինաց բաղոտներուն եւ Հնդկաց հսկայալործ մեհնաց նման:

Միայն Աւետարանին՝ կենդանի եւ մարդասէր Աստուծոյն՝ եւ իր սիրազեղ եւ կենդանարար Հոգւովն լեցուած մարդուն է ստեղծել կենդանի չէնք մը, յորում Աստուած անձամբ ընակի, թէ եւ քօղարկեալ՝ եւ հաւատոյ աչաց միայն տեսանելի. կազմել երկրպագելի Վերնաստուն մը՝ ուր կը նորոգուի յաւիտեան կան զոհն, եւ ուր աստուածային կենաց հաղորդութիւնը կը մշտնջենաւորի. ՚ի մի բան՝ ճշմարիտ պալատ մը համազգային եղբայրութեան:

Թարգմանեց
Յրիորդ Մ. Ա.



ԱՆԾԱՆՕԹԻՆ ԽՆԴԻՐՆ

Շարունակութիւն (*)

Հրայից ժայռեր եւ Մանրադէտ գործի.

Բիւրեղականութիւնն անհրաժեշտ պիտի ստիպէր զԳիտութիւնն՝ հետամտիլ ժայռերու քննութեան: Ի սկզբան պարզ աչքն բաւական կը համարուէր առ այդ, սակայն տկարութիւնն ճանչցուելով իսկոյն՝ ոսպնածեւն իրր մանրադէտ օժանդակեց տկար աչքին: 1826ին William Nicol ժայռային եւ այլ որ եւ է բիւրեղ հնարեցաւ թերթ թերթ քաղել եւ քննել. ամենախիստ եւ կարծր մարմիններն ապակւոյ վրայ զօնցիտով (émeri) շրփելով՝ հարթեց, եւ ապա հարթ երեսն ապակւոյ վրայ սոսնձելով՝ միւս երեսն նոյն կերպով կը հարթէր, եւ ամենանուրբ թերթ մը կ'ըստեղծէր, որով հնար կ'ըլլար ըստ կարելւոյն մանրակրկիտ քննութեամբ դիտել: Այն ատենէն սկսաւ Գիտութիւնն ճանչնալ՝ թէ ժայռերու առ աչս երեւոյթն կրկին կերպարանք ունի, ոմանք՝ ինչպէս են Հատաքարերն (granit) կուտակ կուտակ բիւրեղներու զանգուած են. որոնց անուն տուաւ՝ ըստ տեսութեանն աչաց, Յայտատեսակք (Phanérogènes). իսկ այլք՝ որոց զանգուածին երեւոյթն բիւրեղական չէ՝ այլ աստ անդ բիւրեղացեալ կոյտեր կը զտնուին՝ ի նմին զանգուածի՝ կոչեց Մածկատեսակք (Adélogènes):

Witham բուսարանն 1831ին բրաժոյ բուսականքն խառառ խառ բիւրեղներու վերածելով ըստ վերոյիշեալ եղանակին՝ նախնի բուսականաց ընդ մերայոցս ունեցած նոյնութիւնն հըռչակեց: Sorby 1858ին կանոնաւոր եղանակաւ ժայռերու բիւրեղներն սկսաւ ուսումնասիրել եւ հետաքրքրական նորութիւն մը՝ կամ անծանոթ մը հանեց երեւան. «Բիւրեղք իրենց կազմութեան ժամանակ՝ օտար նիւթեր պարփակած են յինքեանս»: Այս է Ներփակման օրէնքն. (Inclusion). Գայլախաղային հա-

(*) Տե՛ս Պարբեր Ե. Տարբ. Բէ- 10.

տաքարեր դտաւ ներփակեալ հեղանիւթով. բիւրաւոր դողա-
ձեւք լի ջրով, սակայն զօրաւոր մանրադիւր քննելիք. քառա-
կուսի հարիւրորդամեղը խորանարդն՝ բիւրաւոր ներփակումներ
ցոյց կուտայ: Ընդհանրապէս իւրաքանչիւր ներփակումն իւր հե-
ղանիւթ պարփակեալին մէջ փոքրիկ կաղապին պղպջակ մ'ունի
յարատեւ կարծես շարժմամբ ողեւորեալ. ոմանց հեղանիւթն՝
խակոյն կը ցնդի՝ եթէ դոյն բացուի, բնածխական թթուաւ ջը-
րացումն կը կարծուի ըլլալ. սակայն ինչ որ ալ լինի՝ յայտնի է
որ այդ բիւրեղներ ահաւոր ճնշմամբ մը կաղմուած են: Ժայ-
ռային մետաղներէն ոմանք՝ պարզաբար կաղային ներփակում-
ներ ունին. եզերաց մօտ առած դոյնին աստիճանէն կը հասկըց-
ուի. որով յայտնի է՝ թէ սոյն մետաղաց բիւրեղականութիւնն
հալածոյ վիճակին յաջորդած է: Անկերպարան այսինքն անբիւ-
րեղային մարմնոյ մէջ կաղմութիւն ստացած են սոյն բիւրեղք:
Հրաբխային ժայռք նոյնօրինակ ներփակումն կը ցուցնեն:

Sorbyի սոյն դիւան շատ երկրաբաններու յորդոր եղաւ բո-
լոր ժայռերն նոյն օրինաց վրայ քննելու. որով Յայտատեսակ
եւ Յածկատեսակ կաղմութիւնն մերժեցին, զոր հաստատած էր
Cordier. եւ քարոյցելին՝ թէ այն ժայռերն՝ որոնց զանգուածին
երեւոյթն անկերպարան է՝ եւ աստ անդ ցիրուցան բիւրեղի
կոյտեր ցոյց կուտան, ոչ թէ անկերպարան՝ այլ բոլորովին բիւ-
րեղացած են: Անկերպարան երեւցածն՝ մանրախուռն բիւրեղ-
ներու կուտակումն է, նոյն եւ նման կաղմութեամբ միծահա-
տոր բիւրեղներու, որոց անուն տրուեցաւ Մանրակն (Micro-
lithes). այսպէս Միքանաքարն սլորփիւրոս, եւ Խստաքարն՝
(Trachyte):

Մանրադիւրն դիւան այսպէս նախկին դրուժիւնն եւ զա-
ղաւարներն փոխելով՝ նորն հաստատեց: Կը կարծուէր յայնժամ
թէ ժայռերու մէջ մետաղ չդանուիր. փոխուեցաւ այդ ալ, հա-
տաքարային ժայռերու վրայ բուռած ցորեանն լուսածնի թթու-
տով պարարտացած կ'երեւէր, մանրադէան բացառեց պատ-
ճառն. վասն զի հատաքարի մէջ Խաբուսիկ քարն (Apatite) կը
դանուի, որոյ կաղմութեան մէջ առատ է լուսածինն:

Vogelsang մանրադիւրն ճանչցաւ՝ որ բիւրեղի եւ ան-
կերպարանի մէջ՝ աստիճան մ'ալ կայ միջին, բիւրեղացու
(Cristallites) անուամբ. իսկ 1872ին Rosenbusch սոյն ման-
րադիւրական քննութեանց վրայ աւելցուց բնւեռացման փորձն.

դոր ապա Fouqué եւ Michel — Lévy առաջ մզելով՝ այժմեան քարազրութիւնն կազմակերպեցին:

Հրապին ժայռից Դասաւորութիւնն եւ տարիքն.

Ըստ տարրարանական կազմութեանն հրապին ժայռք կրկին զատերու կը վերածուին. որոնք որ զայլախաղային առատ բազալազրութիւն ունին՝ այսինքն՝ առ 100/65 է մինչեւ 68՝ կ'ըսուին հիմնականք (acides կամ légères), որպէս ուղղաքարն, ձիթաքարն, վանակնն, եւայլն: Այս զատուն կը վերադարձնէ Հատաքարն եւ Վանակնաքարն ծիրանաքարն:

Այն ժայռեր որոց մէջ զայլախաղային բազալազրութիւնն 50 է մինչեւ 65 կը հասնի առ 100՝ կ'ըսուին միջակք (neutres), այսպէս են ծիրանեքարն հատաքաղ (porphyrites), Խտաքարն:

Այն ժայռեր որոց մէջ նոյն բազալազրութիւն 40 է մինչեւ 50 կը հասնի առ 100՝ վերջնականք կը կոչուին (lourdes կամ bassiques): Այս զատէն է Երկաթաքարն (basalte), զատաքարն (diorite): Բայց ՚ի տարրարանականէն նսեւ բիւրեղական կազմութիւնն առանձին դասերու կը բաժնէ հրապին ժայռերն. որոնք որ հատաքարի նման ամբողջովիմբ տեսանելի բիւրեղականութիւն ունին՝ առանձին դաս կը կազմեն հատաքարանմանք (Granitoïde) անուամբ. իսկ որոնք որ խտաքարի նման ուրեք ուրեք բիւրեղի կոյտեր եւ զանգուածովի անկերպարան կ'երևուին, զոր մանրադիտիւ քննելով տեսանք մանրակոյտ բիւրեղակներ լինել՝ մանրակն անուամբ, կը զատանին դաս մը՝ խղտաքարանմանք (trachytoïdes) կոչմամբ:

Իսկ երբ խաղառ անկերպարան է ժայռն եւ ապակեղէն երևոյթ ունի՝ կ'ըսուի Ապակեման (vitreuse): Իւրաքանչիւրն այս զատերէն զանազան բաժանումն ունի զարձեալ յինքեան:

Դասաւորութեան համար օգտակար է մանաւանդ իւրաքանչիւր ժայռից տարիքին ուշ դնել, առ այդ հետեւեալ կանոններն պէտք է զիտնալ.

Եթէ հրապին ժայռ մը ուրիշ հրապին ժայռի մը մէջէն կտրէ ու անցնի, կ'ենթադրուի՝ թէ անցնողն հեռուորդ է եւ կրտսեր քան զկտրեալն: Նոյնպէս եթէ հրապին ժայռ մը՝ ետեղական խաւերէն անցնելով երակ մը կամ պորտ ձեւացուցած ըլլայ,

յայտնի է որ քան զեռեղականն կրտսեր է հրայինն, եւ յետոյ ուրեմն մտած հոն:

Եթէ հրային ժայռ մը՝ ուրիշ ժայռի մը կտորներ պարու- նակէ՝ քան զայն ինքն 'ի վերջոյ է. նախկին գոյութիւն ունե- ցող ժայռերու մասունքը են ատոնք, որոց տեղն եկած զրաւած է ինքն:

Եթէ ընդհակառակն եռեղական զնստեալ դեանի մէջ խը- ճացեալ հրային ժայռից կտորներ գտնուին, յայտնի է որ եռե- ղականն քան զհրայինն մանուկ է տիօք:

Այս քննութիւններով Երկրագնտիս հինգ մասին ժայռերուն կազմութեան կրնանք մերձաւորապէս ընդարձակ ժամանակա- միջոցն որոշել, իւրաքանչիւր երկրաբանական դարուց դործն ճանչնալ, Երկրաբանք՝ որ ցարդ քան զամեն մասունս Երկրա- գնտիս՝ Եւրոպականն աւելի եւ եռանդեամբ ուսումնասիրած են, եւ քայք մասին արեւմտեան կողմն աւելի եւս, կրկին ժամանա- կամիջոցի վերածած են զայն. Յիւն եւ նոր, Հինն՝ առաջին շըր- ջանէն սկսեալ նախնականէն մինչեւ եռական դարն կը ձգի, իսկ նորն՝ երրորդային դարէն մինչեւ այսօրեայ հրաբխային ազդե- ցութեանց արդիւնքն:

Հնոցն մէջ հիմնական ժայռերն աւելի են, իսկ կազմու- թեամբ՝ հատաքարանմանք կը տիրեն. մանրակնեայ կամ ապակ- եայ ժայռք վերջին ժամանակի դործք են: Այս դարուս դործ են հատաքարն, ծիրանաքարն:

Նոր չըջանին մէջ ունինք մանրակնեայ եւ ապակեանման ժայռերն. վերջնական բաղադրութիւնն առատ է, իսկ հիմնա- կանն չատ նուազ: Այս դարուս է խստաքարն, երկաթաքարն, սեւակուճն:

Հրային ժայռերու գլխաւոր տիպարքն.
Հատաքարային ժայռք:

Հատաքարն ամենէն աւելի ծանօթ հրային ժայռերէն մին է. իր անունն՝ կազմութեանն արդիւնքն է. հատիկ հատիկ բլու- րեղական միութեամբն: Ընդհանրապէս դորշագոյն է, կայ նաեւ դեղինն եւ կարմրորակն. կը պարունակէ՝ 1. թափանցիկ եւ անդոյն եւ անկանոն բլուրեղականութեամբ հատիկներ, որ է

վանակն. 2 անթափանց եւ սպիտակ կամ վարդադոյն բիւրեղ-
ներ՝ ուղղաքար արաստաքարի (feldspath orthose). 3 սեւ-
ազոյն թերթանման փայլուն եւ զիւրաբաժան կտորներէ. սեւ
փայլաքար (mica noir): Բաց աստի կրնայ սլարունակել նաեւ
իր կազմութեան մէջ ուրիշ հանքեր:

Եթէ թեթեւ եւ նուրբ թերթ մը հատաքարի մանրադիտի
ձեւքով զիտենք՝ վանակնն բեւեռացման կենդանի գոյներով
խկոյն տեսանելի կ'ըլլայ եւ բազմաթիւ մաքուր ներփակում-
ներով կը ճանչցուի: Ուղղաքարն ընկերակած բիւրեղներով եւ
բեւեռացման ժամանակ իր մէջ կապուտակ եւ սեւ բիծերով
կը յայտնուի, խորտակած բիւրեղներուն սլատճառաւ: Որչափ
բիւրեղ եւ որչափ ալյառեւ մարմին որ սլարունակէ հատաքարն՝
իւրաքանչիւրին յատուկ տեղ սեպտականած է. այնպէս զի երբ
հատաքարին մէջ խարուսիկ քար կամ սեպաքար (Sphène) մըտ-
նեն՝ միշտ սեւ փայլաքարն անոնց վրայ նստած է. որով յայտ
է՝ թէ վերջինն քան զառաջինս աւելի յետոյ բիւրեղացած է:
Այսպէս արաստաքարն կը պատէ զփայլաքար, եւ վանակն զա-
մենն միանգամայն: Որով կը տեսնուի թէ նոյն իսկ բիւրեղա-
յութն չատ որիչ ժամանակներու բաժնուած է. միոյն՝ յառա-
ջելով, եւ միւսոյն՝ հետեւելով:

Գրեթէ ամեն տեղ կը գտնուի հատաքարն, զանազան տե-
սակ է: Երբ հատիկներն փոքր եւ հաւասար են՝ կ'ըսուի ման-
րահատ կամ փոքրահատ հատաքար, (granite à grain fin).
Երբ անհաւասար են հատիկներն՝ կ'ըսուի մեծահատ հատաքար
(granite à grandes parties):

Ամենէն հին ժայռն է հատաքարն, ամեն հրալին ժայռեր
սորա մէջ մտած կամ միտած են, ոչ երբէք ինքն յայլս. իր կազ-
մութիւնն զնստեալ ժայռերէն շատ առաջ է. իր մէջ կրտսերն
եռաբոյթակ դարուն ծնած է:

Որչափ ալ պինդ եւ կարծր՝ սակայն ջրոյ ազդեցութեամբ
կ'ապականի չուտով. ջրոյ մէջ լոյծ լոյծ լոյծ լոյծ լոյծ լոյծ լոյծ
լուծիչն է: Ուղղաքարն՝ որ իր կազմիչներէն մին է՝ բաղադրուած
է պալլեղածնի գալախաղատէ եւ կալիոնէ, վերջինն բնած-
խական թթուով կը լուծուի եւ կը կազմէ կալիոնի գալա-
խաղատ, որ իր շրջանաւն կը դառնայ ի լոյծաւ կալիոնի եւ
կ'ապականի, Իսկ պալլեղածնի գալախաղատն անխորիւ մնա-
լով կը ձեւացունէ սպիտակ կաւ մը, Յալապալապալա կամ
Յաղապալապալա (Kaolin, Terre à porcelaine) անուամբ, Իսկ

վանակնն որ կը մանրի ջրոյն մեքենական աղղեցութեամբն եւ փայլաքարի հետ խառն կը կազմէ առազն կամ առազախիմն:

Երբեմն փոխանակ փայլաքարի՝ սեւ երկանան քարն (amphibole hornblende) կը փոխանակէ. երկահանեան հատաքարն (granite amphibolique) կարմիր գոյն ունի. որով ընդհանրապէս կը կոչուի կարմիր հատաքար. կարմրագոյն լինելուն պատճառն է՝ արաստաքարի մէջ գտնուող ներկակմանց պարունակած արիւնաքարն, որ երկաթի թթուկ մ'է:

Հատաքարի մերձաւորն է Հատկաքարն (Granulite). կազմութեամբն նման են իրարու. միայն վերջնոյս պարունակած փայլաքարն փոխանակ սեւ լինելու ճերմակ է. (mica blanc, muscovite). Հատկաքարի կազմութիւնն շատ աւելի կանոնաւոր է բերեղներու բարեձեւութեամբն քան հատաքարանցն. Ասոր կազմութեան մէջ կը մտնեն Ձեքմաքարն (Tourmaline) զմրուխտ, տպազիոն, սեպաքար, խաբուսիկ քար, եւայլն: Առ 100 միւնչեւ 78 գալախաղ կ'ունենայ, մինչ հատաքարն միւնչեւ 72. երկայն եւ բնդարձակ երակներ կը կազմէ. աւելի կրտսեր է ամօք քան զհատաքար, սիլուրեան, դեւոնեան եւ բնածխան կան դարուն ծնունդն է:

Հատկաքարի մի տեսակն է Մածաքարն (Pegmatite), յատուկ հիւսուածք մ'ունի, ուսկից ստացած է իր անունն, վասն զի վանակնն եւ արաստաքարն իրարու մէջ մտած են եւ մածած, իսկ փայլաքարն թէպէտ եւ նուազ քանակաւ, այլ տեղ տեղ ամփոփուած եւ արծաթի կուտակի նման խտացած է: Սպիտակ եւ վարդագոյն փայլուն ժայռ մ'է: Մածաքարի մի տեսակին վրայ վանակնի բերեղք սեպածեւ զրերու երեւոյթ առած են, որով եբրայեցի մածաքար կամ սեպագիր մածաքար (Pegmatite graphique, hébraïque) կը կոչուի:

Հատկաքարն մերթ փոխանակ փայլաքարի ուրիշ հանք մը՝ թերթաւոր՝ կը պարունակէ, զանազան գոյներով. ըստ գունոյն անունն կը փոխուի. կանաչ հատկաքար (Chlorite), դոր հինք Նախնածին (Protogine) կոչած են:

(Շարունակելի)

Ս. Վ. Ն.

ԲՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ԲԱԶՄՈՒԹԻՒՆՆ

Է.

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ



1 ռաւաւորք բնակելի են եւ բնակիչ ունին:

Պարզ զաղափար մ'է այս, բայց հարցում մ'ունինք. Ինչո՞ւ այնչափ անթիւ անհամար աշխարհներու մէջ մեր Երկրաւորնոցն միայն Փրկագործութեան ահաւոր խորհրդոյն արժանաւոր վայր կ'ընծայուի: Ձենք կրնար Երկրիս փոքրութիւնն առարկել, վասն զի բնակելի աշխարհաց թուոյն մէջ արեգակունքն չենք կրնար համարել. դիտութիւնն այսօր հաստատապէս կը ճանչնայ այդ ահաւոր մարմնոց պաշտօնն, որ է՝ լոյս եւ ջերմութիւն սփռել իրենց զրութեան մէջ գտնուող բնակելի գնդոց վրայ: Արեգակունք եւ միգամածք՝ ըստ գիտութեան տուած սահմանին՝ բնակելի չեն կարող ըլլալ. միայն մոլորակներն այդ վիճակին մէջ հաւատարմ կամ համարելով՝ կրնանք մեր արեգակնային զրութեան մոլորակներուն հետ բաղդատել զանոնք: Ըստ այդմ Երկրագունտս մեր զրութեան ամենէն մանր աշխարհն է, ընդհակառակն մեծերէն մին, կամ միջինն. որով փոքրութեան առարկութիւնն հիմն չունի, եւ մանաւանդ զի Փրկագործութեան խորհուրդն միայն բարոյական գասի վերաբերելով՝ բնական կամ նիւթական խնդիրներով չկրնար լուծուիլ:

Էականք բնութեան նկատմամբ զանազան ենթադրութիւններ եւ կարծիք կրնանք յղանալ:

Կարելի է այնպիսի կենդանի եւ մտաւոր էակներ ենթադրել՝ որոց բանականութիւնն մինչեւ աստուածածանութեան չհասցունէ զիրենք. այդպիսեաց համար Փրկագործութիւնն արժանաւոր է. վասն զի Արարչին զաղափարն չունին եւ իր օրէնքն չեն զիտեր:

Իսկ որք ունին այդ ծանօթութիւնն՝ զանազան կերպով կրնան սերլլ. Մարչ՝ Աղամաւ ծնաւ եւ յԱղամ կ'ապրի, իսկ այլք՝ ալլօրինակ:

Աստուծոյ արարչագործ զօրութեան սահմանն մենք ոչ զիտենք եւ ոչ կրնանք. բերաւոր եղանակաւ կրնայ սերունդ տալ իր արարածոց: Կրնանք մի քանին ճանչնալ. ինչպէս է՝ հրեշտակաց անձնական ստեղծումն. որով միոյն կամ միւսոյն արդիւնաչատութիւնն կամ ապարդիւն մնալն իրմէ սերած յաջորդաց վրայ չազդեր: Որով Փրկագործութեան խորհուրդն՝ որով մեր Երկրագունդն օժտեցաւ՝ այդ էական չկրնար պատշաճիլ. ինչպէս եւ ոչ իսկ անկեալ հրեշտակաց:

Կրնանք դարձեալ այնպիսի էակներ ենթադրել՝ որք յաստուածուստ շնորհադարեալք՝ չեն կարող ապաշնորհել, կամ ընդհակառակն այնպիսիք՝ որ թէպէտ եւ կարող են յայդ րայց հաւատարիմ մնացած են իրենց կոչման, այգալիտեաց համար Փրկագործութեան հարկ չկայ:

Հնար չէ՞ միթէ կարծել՝ ընդհակառակն՝ թէ շատ էակներ իրենց ապաշնորհութեամբ անդառնալի դատաւճիռն ընդունած ըլլան, հետի յաստուածային ողորմութենէն մնալու:

Որչափ ալ այսու բնակելի աշխարհաց թիւն համառօտի, սակայն միթէ մեր Երկրագնդին վիճակակից Երկնագունդը չէ՞ն զանուիր, եթէ նոյն իսկ մի կամ երկու զանուիրն՝ միթէ բերաւորաց նման չէ՞նք կրնար կրկնել մեր հարցումն, թէ ինչո՞ւ այս կամ այն եւ կամ հազարաւոր աշխարհաց մէջ մեր երկրագունդն միայն Փրկագործութեան արժանաւոր վայր կ'ընտրուի, կամ ինչպէս նոյն Խորհրդոյն արդիւնքն կարելի է փոխադրել յայնս:

Սոյն կրկին հարցմանց առաջինն հիմնական խնդիր մը չէ՝ վասն զի նոյն նման կերպով կրնանք հարցունել՝ թէ ինչո՞ւ Բանն մարմնացեալ փոխանակ այս կամ այն փառաւոր քաղաքներու՝ Բեթլեհէմի մէջ կ'ուզէ ծնանիլ: Վասն զի աշխարհիս անձանթ անկիւնն եւ ամենէն արհամարհ ժողովուրդն ուղեց ընտրել. նոյնպէս, վասն զի կրնանք կարծել՝ թէ տիեզերաց ամենէն անկեալ ու խղճալի աստուածածանօթ էականք բնակարանն ըլլալով մեր Երկրագունդն, Փրկագործութեան ուղղակի կեդրոնավայրն 'ի մեզ ուղեց գնել: Խնդիրն կը մնայ երկրորդ հարցման վրայ. Ինչպէս մարթ է Փրկագործութեան շնորհքն արդիւնաբերել յայլ աշխարհս:

Հակիրճ խօսք մը նախ քան զայդ. Աղամային յանցանքն կամ սկզբնական մեղքն կրնայ համեմատուիլ ամբողջ մարդկա-

յին բնութեան բարոյական ստանութեան հետ Մարդկութիւնն որ յԱզամ էր զօրութեամբ եւ 'ի նմանէ է Էռքեամբ՝ նոյն սասանուն ունեցաւ, այնպէս զի՝ ուսումնական կերպով մը բացատրելով, այն ստանմանէ ծնած շարժումն՝ մարդկային բնութեան աստուածատուր թրթռումն փոփոխեց. իսկ Փրկագործութեան խորհուրդն նորէն սասանութիւն տալով մարդկային բնութեան՝ յառաջին վիճակին վերստին հաստատեց:

Բայտ այո՞ւմ եկեղեցին՝ Փրկագործութեան շարժման համապատասխանօղ հոգեոց վայրն է: Իսկ այդ շարժման սահմանն Շարժումն կայ, սակայն միջոցի գործ չէ. անհիմն եւ անհեթեթ կարծիք է՝ սահմանափակել այդ մեծ շարժումն արեւելեաց մէջ թաւալղոր գնացօղ աւագահատ երկրադնտիս, յորում կատարուեցաւ մեծ խորհուրդն Անպատճառ՝ իսկ եւ իսկ զինի աւարտման մեծին դադանեաց՝ նոյն շնորհաձիր շարժումն տարածուեցաւ բոլոր մեր վիճակին մէջ դանուօղ էակաց՝ որք երկնային կամարին մոլորական լուսաւորաց մէջ կը բնակին, մեզ նման տարազիրք յԱստուծոյ: Արդէն իսկ մեք կը հաւատամք՝ թէ՝ ննջեցեալ արդարօց հոգիք Փրկագործութեան արդիւնաւոր թրթռումն զգացին աւ վայելեցին իսկոյն, դարձեալ կը հաւատամք թէ մեր հոգիք մահուընէ ետքը՝ այնպիսի տեղ մը ուր ոչ ժամանակի եւ ոչ միջոցի գործ պիտի ըլլայ՝ պիտի նոյն Փրկագործութեան խորհրդոյն կենսատուր շարժմանց հաղորդին եւ առանց այլ եւս խափանարար երկիւղի: Ոչ ինչ հակառակ է մեզ եթէ կրկնեմք՝ թէ մեզմէ տալբեր բնութեամբ ու այլազան հոգիք՝ նոյն շարժման կը հաղորդին եւ մեզ հետ միասին մի եւ նոյն տեղոյ մասնակից են, ուր պիտի լինիմք զինի մահուն:

Կարելի է թէ այս այսպէս ըլլայ, կ'ըսէ հարցիչն, սակայն ինչպէս ճանչցան բարոյական այդ մեծ դադանիքն այն էակներն:

Պատասխանն շատ խրթին չթուիր. ինչպէս որ մենք զմեզ յաստուածածանութեան կ'առաջնորդեմք, նոյնպէս այն էակներն յաստուածուստ կրնան առաջնորդուիլ զէպի բարոյական այն մեծ դադանեաց ծանօթութիւնն: Սակայն հարցում մ'ալ մենք կրնանք ընել. Փրկագործութեան շնորհաց հաղորդ լինելու համար՝ նոյն խորհուրդն ճանաչել հարկ է միթէ: Ինչպէս մենք՝ խորհրդոց գոյութիւնն կը ճանանք առանց անոնց էութեանն հասու լինելու, այսպէս միթէ չէ՞ հնար ենթադրել այնպիսի էակներ՝ որոնց առջեւ Փրկագործութեան խորհրդոյն թէ՛ գոյու:

թիւնն եւ թէ էութիւնն անծանօթ մնայ, առանց նորին շնորհաց հաղորդութեան խափան լինելու:

Ինչ որ բնական երեւութից վրայ կ'երեւի՝ նոյնն բարոյականին նկատմամբ կը տեսնեմք. չատեր բնական կարգաց խել մը զործոց անտեղեակ են, սակայն նոյնպէս կ'ըզգան ու կը հըպատակին նոյն ազդեցութեանց. տղայ մը՝ որ ոչ խորհրդոց ծանօթութիւնն ունի եւ ոչ ալ բան մը կը հասկընայ, պարզապէս խորհրդոյն կատարմամբն՝ ինչպէս է Մկրտութիւնն՝ Փրկագործութեան արդեանց կը հաղորդի: Նոյնպէս էր Հնոյ Օրինաց արգարոց հողոց հաղորդութիւնն, որք թէպէտ եւ Քրիստոսէ առաջ ապրեցան սրբութեամբ՝ եւ Մարգեղութեան խորհրդոյն անծանօթք էին՝ սակայն Փրկագործութեան շնորհաց հաղորդեցան: Նոյնպէս այն ամենքն՝ որք կ'ապրին ցարդ ուր ուրեք եւ իցէ առանց նոյն Խորհրդոց ծանօթութեան, սակայն բնական օրինաց ամենեւիմբ համաձայն, այնպիսիք՝ անշուշտ եմք՝ թէ Փրկագործութեան արդեանց ամենայնիւ հաղորդ են:

Ինչ զգուարին ուրեմն ենթադրել թէ այլ աշխարհներու մէջ բնակող էակներն վերոյիշելոց միոյն նման վիճակ ունենան. նմանին նորակնունք կրախայից, կամ անցեալ եւ ներկայ արդարոց:

Ներկայ գիտութիւնն այնպիսի ազդակ մը կ'ենթադրէ՝ որ միջոցի մէջ տիրուած՝ տեղեւորաց բոլոր տեսանելի մասունքն իրերաց հետ կը կցէ. այդ ազդակն Երեւ կը կոչուի:

Դարձեալ գիտութիւնն կը հաւաստէ՝ զօրութեան անաղարտ լինելն: Նիւթական ամեն երեւոյթ զօրութեան մը յայտարարն է. ձեւն կը զանաղանի, ինչպէս է՝ լոյս, ջերմութիւն, էլեկտրութիւն, եւ այլն: Անգամ մ'որ ծնանի այդ զօրութիւնն՝ առանց բնաւ չքանալու կ'ըսիսի փոխակերպիլ հետ զհետէ անվերջ փոփոխութեամբ. եւ այդ նոր ձեւերու տակ ծածկուած կենդանի է ինքն:

Այսպէս Եթերի մէջ սկսած առաջին շարժումն՝ ծնունդ կուտայ յաջորդ անթիւ թրթումանց եւ հետզհետէ. առաջին զօրութիւնն կենդանի է երկրորդ շարժմանց մէջ նոյն առուգութեամբ:

Ամեն էակ՝ ամեն առարկայ որ լուսոյ ազդեցութիւնն կ'ընդունի՝ նման շարժմանց կեդրոն է. այդ շարժմանց կցորդու-

թիւնն մեր զգայարանաց կը հողորդեն արտաքին էակներն եւ իրերն թէ եւ ոչ անսահման՝ սակայն անհուն արագութեամբ կը սփռին այդ շարժմունքս Արեգական մէջ կատարուած երեւոյթ մը՝ լուսազնդի ժայթքում մը՝ ութ վայրկեան վերջը կը տեսնուի մեզ. այսինքն թէ իմ տեսած արեւս ութ վայրկեան առաջուան արեգակն է՝ Նոյն օրէնքն պիտի վարեմք երկնից որ եւ է լուսաւորաց համար. եւ վասն զի միջոցին ստիմանն անծանօթ է մեզ՝ ուստի այն լուսաւորաց հեռաւորութեանն չափով անոնց մէջ կատարուած երեւոյթն զէսլ 'ի մեզ հասնելու՝ եւ կամ մեր Երկրագնդին վրայ պատահածն անոնց երթալու համար, հազարաւոր տարեաց կրնանք կարօտիլ:

Այսպէս Գողգոթայի վրայ կատարուած անաւոր խորհրդոյն տեսութիւնն կարելի է թէ միջոցի մէջ տեղէ մը ճիշդ այն պահուն նկատուած ըլլայ, ըստ լուսոյ երազութեանն, եւ իր հեռաւորութեան չափոյն համեմատ:

Որոշեալ սահմանէն անդին մեր աչաց կարողութիւնն չանցնիր, յայտնի է. այդ սահմանն մեր տեսանելեաց կարողութենէն եւ պատահած երեւութին յառաջ բերած շարժմանց խտութենէն կախումն ունի. բայց մեր տեսութեան տկարանալէն չհետեւիր ըսել՝ թէ այդ շարժմունք գոյութիւն չունենան. որչափ աւելի շարժմունքն սփռուի՝ խտութիւնն կը տկարանայ, ճշմարիտ է. սակայն չիճանար, ինչպէս ըսինք:

Երբ մարդ նորանոր զիւտից շնորհիւ իր աչաց գօրութիւնն յաւելու, երբ լուսանկար գործիներու միջոցաւ անըմբռնելի ճառագայթմունքն տեսնէ, ինչո՞ւ անհեթեթ կամ հակասական համարուի՝ եթերի ցնցման վերջնական համասփիւռ թրթռման՝ որ մեր այժմեան տարողութեան անզգալի է՝ երկնագնդաց մէջ նոր խտութիւն ստանալով տեսանելի ըլլալն. նոյն իսկ պարզ մերային աչաց, Այս կերպ մ'է բացատրութեան, ասանկ չէ՞ արդեօք, ո՞վ կրնայ ոչ ըսել կամ այո՛ւ. Իսկ Աստուած դեռ այլ բիրաւոր ճանապարհաւ միթէ Փրկագործութեան լոյսն չէ՞ կարօղ հաղորդել երկնաբնակ ազգաց բազմութեան:

Պարզ կարծիք են ասոնք յիրաւի, բայց ոչ Աստուծոյ բաւութեան եւ ոչ ալ զիտութեան սկզբանց հակառակ:

Ո՞վ կրնար խորհել՝ թէ Քրիստոսի Խաչին մեծ խորհուրդն կրնայ ժամանակի մէջ բաղմապատկիլ յանհունս, սակայն Հաղորդութեան պակուցիչ խորհրդոյն հաստատութիւնն վաւերացոյց մեզ զայդ: Չե՞նք կարօղ կարծել թէ Աստուած նմանօրի-

նակ գործէ այլ աշխարհներու համար ալ Փրկագործութեան երեւումն բաղմապատկելով: Ինչ որ Հաղորդութեամբ ըրաւ 'ի մեզ ժամանակի մէջ՝ նոյն բանն կարօղ է ընել երկնային համասիրեռին մէջ բնակօղ էակներուն՝ միջոցի մէջ բաղմապատկելով Փրկագործութեան երեւումն:

Ահա զիտութեան զեղեցկութիւնն. ընդարձակ հորիզոնն պարզուած, հաւատք քրիստոսականք՝ վարդապետութիւնք եւ խորհուրդք՝ մեր Երկրագնդին անձուկ սահմանն կ'անցնին կը սուրան, մինչեւ յաւիտենականն:

Հուսկ բանիս, ինչպէս Հաղորդութեան Ս. Խորհրդոյն ժամանակի մէջ բաղմապատկութիւնն՝ այսպէս ալ Դողդոթայի ահաւոր Զոհին միջոցի մէջ բաղմապատկութիւնն՝ պարզապէս նիւթական միջոցաւ մարթ է կարծել թէ հաղորդուած ըլլայ Վերնոց: Իսկ մեք կարծեմք թէ նիւթական հաղորդութիւնն 'ի սպառ իսկ աւելորդ է, Փրկչին Յիսուսի անճառելի շնորհ՝ կամ բարոյական միջոցաւ յայտնուած եւ հաղորդուած են Վերնոց, եւ կամ առանց ամենեւին ծանօթութեան՝ լոկ հաղորդութիւնն շնորհուած է, նման նորածին երախային՝ որ Մկրտութեան անծանօթ՝ այլ արդեանցն հաղորդ է մկրտուելովն:

Բանին Աստուծոյ ըստ աշխարհաց աշխարհաց յաջորդաբար մարդեղութեան կարծիքն չքննեցինք մենք. այս կարծիքն՝ որ չզիտեմ թէ պաշտօնապէս դատապարտուած է յեկեղեցւոյ թէ ոչ՝ սակայն Իր վարդապետութեան ողբոյն անպատշաճ ու հակառակ է: Դարձեալ Աստուծոյ գործոց միութեան կը հակառակի. վասն զի զանազան պարագայից մէջ նոյն արդիւնքն յառաջ բերելու համար Աստուած անձամբ չմիջամտեր. այլ իր գործոց ընթացքն ժամանակի եւ միջոցի մէջ կը ծնանին սահմանեալ հետեւութիւնքն: Ուստի անօգուտ է այդ խնդիրն, վասն զի այս կամ այն ճանապարհաւ միակ Փրկագործութիւնն բաւական է ամեն արարածոց:

Ս. Վ. Ն.

ՄԱՆՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

Ինչո՞ւ կայծակը ծառերուն կը զարնէ

Պ. Jonesco Dimitrie յատ անդամ այս հարցումը ինքն իրեն ընկելով խորհեցաւ որ ելեկտրականութիւնն աստիճանաբար կը ներգործէ իր ոյժն մարմնոց վրայ. այսինքն՝ ամեն մարմին նոյն աստիճանաւ հաղորդական յատկութիւն չունի, ոմանք՝ բնագիտական բառով՝ լաւ հաղորդիչ են, ոմանք՝ վատ Դիտեց, եւ արդէն զիտուած էր՝ որ ամեն ծառ հաւասարապէս կայծակի ենթակայ չէ։ Հոյցի ելեկտրածին մեքենային մօտեցուց կաղնիի՝ փիճիի՝ կաղամախի՝ ուռենիի թարմ փայտեր, դարձուց մեքենան, մէկէն մինչեւ երկու ստոյտն՝ կաղնին ելեկտրական կայծ մը ընդունած էր. կաղամախն եւ ուռենին հինգերորդ ստոյտին մէջ, իսկ փիճին տասուերկուքէն մինչեւ քսաներորդ չրջանին մէջ կ'ընդունէր կայծակն։ Փորձը յայտնեց՝ որ փայտին ջրոտ կամ սակաւաջուր ըլլալն՝ կայծակի վրայ մեծ ազդեցութիւն մը չունի, մինչդեռ իւղային պարարտութիւնն մեծապէս կ'ազդէ։

Պարարտ ծառերն՝ ինչպէս են փիճին, ընկուղին, թմբին, եւայլն, բաղդատմամբ ջրոտ ծառերու, ինչպէս կաղնին, կաղամախին, ուռենին, կնձնին, եւայլն, վատ հաղորդիչ են. մինչդեռ վերջիններն՝ աւելի զիւրճնկալ, աւելի լաւ հաղորդիչ։

Սոճին՝ որ ձմեռները իւղային պարարտութեամբ լի է եւ ուտին կը թփնէ, ամառն ընդհակառակն ջրոտ ծառերու կարգը կը մտնէ. փորձն ցոյց կուտայ՝ որ ամառ ատեն կաղնիի չափ ընդունակ է կայծակի, մինչ ձմեռն՝ ընկուղենիի պէս վատ հաղորդիչ եւ դժուար ընկալ։ Ուրիշ բան մ'ալ վորձուեցաւ, եթէ ընկուղենիի եւ իր նմաններուն իւղը հանենք եթերով, ջրոտ ծառերու նման կ'ըստանան։

Դարձեալ ջրոտ ծառերուն ողջին եւ կտրուածին մէջ՝ մեծ է տարբերութիւնն. կտրուածն աւելի լաւ հաղորդիչ է։ Տերեւ-

ներն եւ ծառին կեղեւն՝ ամեն տեսակ բոյսերուն եւ ծառերուն համար՝ վատ հաղորդականութեան պատճառ է:

Ուսումնական փորձն եւ արտաքին դիտողութիւնք իրարու հետ միացած են. կայծակէն զարնուող զլիսաւոր ծառերուն կարողըն՝ յիշատակուած փորձերուն աստիճանին համեմատական է. որչափ լաւ հաղորդիչ են՝ այնչափ ալ կայծակի ենթակայ: Մեռած կամ չորցած ծառն աւելի լաւ հաղորդիչ է քան զալարն. փորձն եւ դիտողութիւն ցոյց տուած են՝ որ ծառի մը բունն իր կատարէն աւելի հաղորդական է, իսկ կոճղն եւ արմն՝ բունէն աւելի:

Յիշեալ Գիտնականն կը պնդէ՝ թէ երկրին եւ ծառին դիրքըն կ'ազդեն կայծակի վրայ. ջուրի մօտ դտնուող ծառերն աւելի վտանգաւոր են. առանձնացեալ ծառերն ենթակայ են կայծակնահար ըլլալու քան խմբովին եղօղները: Իսկ երբ ելեկտրականութիւնն շատ ուժով է՝ մեր բոլոր փորձերն կը խախտին կ'ըսէ Ciel et Terre ուսումնական թերթն, ուսկից կը քաղենք սոյն հատուածն:

Ս. Վ. Ն.



ՊՈՒԿՈՅԻ ԵՐԻՅՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՒՀԻ ՄՈՆԻԳԱՅԻ



ՔԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՐԻԿԵԱՆ

(Շարունակութիւն) (Գ)

Սա ապիրատ անձը չկրնար ըմբռնել ամենեւին իւր սուրբ ամուսնոյն վարած կեանքը. իրեն աղօթքը զինքը կը ձանձրացընէ, ողորմութիւնները անսովոր բաներ կը թուին, գերիներու ցուցըցած սէրը՝ յիմարութիւն։ Մեր սրբուհւոյն վարմունքը, ամէն մէկ քայլը այն հազարաւոր խոչընդոտներու կը հանդիպի զորս Տէրտուղիանոս մէկիկ մէկիկ նկարագրած է, եւ քրիստոնէայ կին մը՝ քանի որ հեթանոս մարդու մը հետ կապուած է, չկրնար բնաւ զերծ ըլլալ անոնցմէ։ Միջպէս կրնայ քրիստոնէայ կին մը Աստուծոյ ծառայել, կ'ըսէ այն երեւելի քննաբանը, երբ իրեն քովը անսպասի մարդ մը կայ որ զայն չպաշտեր, թէ որ հարկ ըլլայ իրեն եկեղեցի երթալը, այն օրը սովորականէն աւելի կանուխ շաքիկայ բաղնիք պիտի հրաւիրէ. թէ որ հարկ ըլլայ ծով եւ պահք պահել, ինքը նոյն օրուան համար խնջոյք մը պիտի ապստղէ. եթէ ուղեւոր զուրս կ'ըլլալ, նոյն ատենը ծառաները արտաքուց կարգի զբաղած պիտի ըլլան։ Անսպասի փեսայ մը միջ թէ թոյլ պիտի տայ իւր կողակցին որ փողոցէ փողոց աղքատ կղբարց խրճիթները սլաճտի. հրաման պիտի տայ

(Գ) Տե՛ս Պատկեր. Ե. Տալէ, ըջ. 10

որ գիշերը ելլայ Զատիկի հանդէսին ներկայ զսնուի. կրնայ թուղու որ սուրբ սեղանին մերձենայ, մինչդեռ վրտնք որ սուրբ հաղորդութիւնը հեթանոսներէ խտրել արդելուած է. կրնայ հաճութիւն ցուցնել որ երթայ բանտերու մէջ մարտիրոսաց չըթթաները համբուրէ եւ սրբոց ոտքը լուայ. թէ որ ուզենայ օտարական եւ ճամբորդ պանդխտոց բան մը տալ, մատանը, հընձանը եւ ամէն տեղ կը պուծած պիտի գտնայ»:

Ուրեմն այս է եւ այս պիտի ըլլայ Մոնիդայի կեանքը կամ ճիշդ ըսելու համար, իւր հանապաղօրեայ տանջանքը: Այս ամէն գթկամակութիւնները յօժարութեամբ թերեւս յանձն առնու թէ որ իւր սրտին մաքրութիւնը կորսնցունելու վախը չունենայ. «բայց, աւա՛ղ կը շարունակէ Տէրտուղիանոս, քրիստոնեայ կինը պիտի չընդունի արդեօք յանցաւոր հրապոյրներ հեթանոսական հաճոյից նկատմամբ իւր հեթանոս փեսայէն. մի թէ պիտի չըստիպուի հաճոյական գեղեցկութիւն մը ցուցնելու համար իրեն՝ անվայել պաճուճանքներ տանելու, մարմնոյ անպատեհ դարմաններ տալու, եւ այնպիսի սէր մը զոր Աստուած չկրնար օրհնել»:

Մոնիդա հազիւ թէ կը մտնայ այն յարկին տակ՝ այս ամէն բաները կը դուշակէ եւ կը տեսնայ, եւ իւր մատաղատունկ հասակին մէջ, մտնաւանդ անդին անմեղութեամբը կ'ապշի կը մնայ սեանալով այն ամէն ապիրատութիւնները որոնցմով մարդուն սիրտը լեցուած է երբ Յիսուսի Քրիստոսի շնորհքը տալաւն ոտդած չէ զանիկայ, Բայց չյուսահատիր. այլ ընդհակառակն՝ փոխանակ վատելու անթիւ անհամար քրիստոնէից պէս եւ փոխանակ հեռանալու ամուսնական յարկէն, ինչպէս որ Բարիօրա՝ Հռովմայեցի ազնուական կինը Պատրիկոսի նման գարշելի հեթանոսի մը հետ կարգուելէն ետեւ բաժնուած էր, ինքը իւր սիրտը աւելի վեր ուղղելով՝ կը հառկնայ որ Աստուած իրեն այն ողորմելի անձը ոչ թէ թողլու համար յանձնած է, այլ բժշկելու, դարձնելու եւ լուսաւորելու համար, ի՞նչ բանի կը ծառայէ, ստուգիւ ամուսնութիւն մը, եւ անոր պարտաւորութիւնները, շնորհքները եւ սուրբ կապերը, երբոր փոփոխակի երկու հոգեօք լուսաւորութիւնը չկրնար գործել. ի՞նչ բանի կը ծառայէ սէրը, բնական սէրը, կամ երբոր Աստուած կը շնորհէ՝ այն գերբնական սէրը, որն որ բնական սէրը կը կատարելագործէ, երբոր լուսաւորելու կարողութիւն չունի:

Անիկայ որ լուսոյ մէջ է՝ խաւարին մէջ նստողը թող լուսաւորէ. եւ ինչպէս կ'ըսէ Առաքեալը, անիկայ որ զօրաւոր է

ի հաւատս՝ թող օգնէ անճրկին, եւ անիկայ որ կեանք ունի՝ թող կենդանացնէ մեռեալը: Եւ եթէ այս նպատակին հասնելու համար հարկ ըլլայ տանջուիլ, հեծել, արտասուք թափել, գեղեցիկ եւ փառաւոր մարտիրոսութիւն մըն է այն՝ որուն համար հաւատացեալ կինը իւր անձը նուիրելու է:

Սուրբ Օգոստինոս իւր մօրն այն վսեմ խորհուրդը յայտնելէն ետեւ, քանի մը լուսարձակ խօսքերով կը սորվեցնէ մեզի թէ ինչ հնարքներ գործածեց Մոնիգա այնպիսի դժուարին ձեռնարկութիւնը յաջողութեամբ ի գլուխ հանելու համար. «Պըզտիկուցմէ վարժ ըլլալով, կ'ըսէ, պարկեշտութեան եւ զգոնութեան, հնազանդութեան Աստուծոյ եւ ծնողաց, ամուսնանալուն ժամանակը հասնելով, մեծ յարգութեամբ հնազանդեցաւ նաեւ այն անձին զորն որ Աստուած իրեն ընկեր տուաւ. եւ անուն եռանդով մը վառուած՝ զանիկայ քեզի վաստըլիլու համար, ո՞վ Աստուած իմ, բոլոր ճիգը թափեց, որպէս զի իւր բարուց գեղեցկութեամբը միայն զանիկայ քեզի շահի» Այսինքն զանիկայ Աստուծոյ շահելու համար ոչ խօսք կը գործածէ, ոչ հակաճառութիւն եւ ոչ յանդիմանութիւն. հապա սոսկ քաղցրութիւն, խոնարհութիւն, համբերութիւն, պարկեշտութիւն եւ անձնաւնութիւն, ապահով ըլլալով որ եթէ ճշմարտութիւնը փոխանակ լեզուին ծայրը դնելու՝ որն որ դիւրին բան մըն է, կարեւար վարմունքովը քարոզել, օր մը վերջապէս Պատրիկոս՝ չկարենալով դիմանալ անձնատուր պիտի ըլլար, այնքան՝ անուշ, այնքան չափաւոր եւ միանգամայն այնքան պայծառ լուսոյն առջինս: Միայն թէ՛ սոսկ առաքինութեան արդեամբ ճշմարտութեան յայտնութիւնը կատարելու համար, երկար ժամանակ եւ միանգամայն դիւցազնական առաքինութիւն մը հարկաւոր է: Մոնիգայ թէ մէկը եւ թէ միւսը յանձն կ'առնու. Ամուսնոյն տկարութիւնները եւ անհաւատարմութիւնները տեսնելով բերնէն տրոտունջ մը երբէք չհանէր. լռութեամբ կը տանջուի. անոր բացակայութեանը ժամանակ միայն կուլայ. կը հասկընայ լոր յիմարութիւն է պահանջելն իրմէ հաւատարիմ սէր մը արարածի մը համար, երբոր արարիչն իսկ չսիրէր. ուստի բաւական կը սեպէ բոլոր քրտով խնդրել Աստուծոյ իւր տկար ընկերոջը համար այն հաւատքը եւ այն ատուածային սէրը որոնք կարող են սոսկ ողջախոհ ընել զմարդիկ:

(Շարայարեի)

ԱՌ ԶԵՌՆ

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

ԼԱՏԻՆԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

Ի ՊԷՏԱ ԴՊՐՈՑԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Տ ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՄԻՍՔՃԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՅՈՒՐԲԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ
ԵՒ Ի ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿՂԵՐԱՆՈՑԻ

Ի ՀՌՈՎՄ

Ի ԲԱԶՄԱԼԵԶՈՒԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս. ԺՈՂՈՎՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՒԱՏՈՅ

1893 — ՌՅԽԲ

ՊԱՏԿԵՐ տասն է, հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց եւ օտար երկիրներու համար
բոքատարի ծախքն ի վիասին հաշուելով 50 « «

Իշխանացիք թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եեշիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1